ՓՈՒՂԱԿ

ԹԻՒ 1142 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ — 1877 ՅՈՒՆՎԱՐ 5

ԱԶԳԱՅԻՆ

Կարինէն դեկտ. 2 Թուով դրուած նամակ մը՝ Աղթամարայ Ս. Կաթողիկոսին յիշեալ քաղաքն հասած ժամանակ եղած ընդունելութիւնը կներկայացնէ։

«Աղթամարայ Ս. Կաթողիկոսը նոյեմբեր 7 ին Պոնտոսէն մեկնեցաւ դէպ ի Կարին՝ կիւմիւշխանէ և Բաբերդ հանդիպելով, ուր թէ՛ կառավարութիւնն ու թէ՛ մերայինք սիրալիր ընդունելութիւն ըրին։ Նոյ. 21 ին հասաւ Իլիճէ դիւղ, որ 3 ժամ հեռի է Կարինէն. արդէն գերապատիւ Առաջնորդն և ամենայն մեծամեծք պատրաստ կսպասէին Նորին բարձր Սրբազնութեան գալստեան. դիշերն անդ ագան, և հետևեալ օրը՝ նոյ. 22, գեր. Առաջնորդին հետ կառք նստաւ, բազմութիւն հեծելոց շրջապատեալ. երբ հասաւ կէս գիւղ, որ 1½ ժամ հեռի է քաղաքէն, Ալայ պէյը խումբ մը հեծելազօրօք՝ վսեմափայլ կուսակալին կառքն և արարողապետ Մամճեան Պետրոս էֆէնտի տեսնուելան ընդ առաջ եկեալ. յիշեալ գիւղի մէջ ալ քիչ մը հանգիստ առնելէն յետոյ՝ վերջալոյս ի գլուխ և չքանչան ի պարանոց բազմեցաւ ի կառս կուսակալին և ճամբայ եղաւ դէպ ի քաղաք խուռն բազմութեամբ. հետզհետէ եկեղոց թիւ չատցաւ. երբ քաղաք հասաւ՝ բազմութիւնը մինչև 7 հազարի չափ կար. դեռ Առաջնորդարանի դուռ չհասած՝ իջաւ կառքէն, զգեստաւորեցաւ, և մտաւ յեկեղեցի առաջնորդութեամբ քահանայից և երգեցիկ մանկանց. հոն սքանչառուչ ֆօսքերով օրհնեց ժողովուրդը և առաջնորդարան եկաւ։

«Հետևեալ օրը, նոյ. 24, դարձեալ կուսակալին յատուկ կառքով տեսութեան գնաց Րէչէիս փաշային, որ կուսակալին բացակայութեան պատճառաւ փոխանորդ է. հետն էին բազմութիւն ոստիկանաց և երևելեաց. թէ՛ ի գնալն և թէ՛ ի վերադարձին փողոցները լի՛ էին բազմութեամբ։ Օր մը ետքը, այցելութեան եկան Րէչէիս փաշան, և ռուսական՝ անգղիական ու պարսիկ հիւպատոսք, և յունաց ու պապականաց առաջնորդք. և Ս. Կաթողիկոսն ալ փոխադարձաբար այցելեց նոցա։

«Ալայ պէյը վսեմափայլ կուսակալին բարևներն յատկապէս մատոյց Ս. Կաթողիկոսին. Նորին վսեմութիւնը չատ փափաքեր է որ Ս. Կաթողիկոսին հետ տեսնուի, բայց կարօտէն առած ստիպողական հեռագրոյ վրայ հարկադրեր է ճամբայ ելնել. այսու ամենայնիւ նոյն ինքն անձամբ հրամայեր է ընդունելութեան համար պէտք եղած պատրաստութիւնները։

«Տասնապետ մը երեք ոստիկանաց հետ՝ Ս. Կաթողիկոսին արամադրութեան ներքև էին, կարին գտնուած օրերը։

«Նորին բարձր Սրբազնութիւնը դեկ. 2 ին ուղևորեցաւ ի Հայաստան աշխարհ, ի տեղի բնակութեան նախնեաց մերոց»։

Այսուհետև կփափաքիմք՝ տեսնել Աղթամարայ Ս. Կաթողիկոսին ազգօգուտ ձեռնարկութեանց ու գործոց վրայ տեղեկութիւն պարունակող դրեր, և հրատարակել ի լուր և յուրախութիւն Ազգին։

—

Ուրֆայէն հայոց, ասորւոց և պապականաց ստորագրութեամբ դիր մը հասեր է մեր Պատրիարքարան քանի մ՚օր յառաջ, որով կխնդրեն միջնորդել առ կայսերական կառավարութիւնն՝ ջնջուելու համար տրոց մէկ չորրորդ մասն ղեղչելու համար։

Պատրիարքարանն այս մասին չկրնար ուրիշ բան ս՚ընել, այլ յիշեալ դիրն յատուկ գրով մը Բ. Դրան ուշադրութեան և տնօրինութեան յանձնել, ինչպէս՝ կարծեմք ըրած է մինչև ցարդ։

—

Հանդուցեալ Տ. Աբիստակէս սրբազանի խորհրդ քոյրը՝ որ երկու շաբաթ յառաջ մահմետական կրօնքն ընդունեց իւր երկու մանչ և երկու աղջիկ որդւոց հետ, Պատրիարքարանի և իւր պարագայից կողմանէ եղած յորդորները մերժելով,—այժմ ղրկացած՝ կուզէ դառնալ իւր մայրենի եկեղեցւոյ գիրկը, որդւոցը հետ։

Օրթա մեծ որդին այս շաբաթու Պատրիարքարան գալով՝ Ս. Պատրիարք Հօր հետ տեսնուեցաւ, և յայտնեց իւր և նոցա վերադարձի որոշումն։ Իսկ մայրն ու միւս եղբարքը տակաւին մինչև երեկ երեկոյ Պէյլիկճի պէյի տունը կդտնուէին, ուր գացեր են իսկզբան։ Պատրիարքական փոխանորդ Գեր. Հայրն Պէյլիկճի պէյին երթալով՝ ծանուցեր է նոցա վերադարձի կամքը, բայց նա պատասխաներ է, թէ ինչպէս իսկզբան ինքը չհրաւիրեց, նոյնպէս հիմայ ալ ինքը իւր տունէն չհաներ զանոնք, աղատ են ընել ի՛նչ որ կուզեն։

Ս. Պատրիարք Հայրը հարկադրեցաւ՝ յատկապէս թադրիր դրել արտաքին գործոց նախարարին, եղելութիւնը ծանուցանել, և այս մասին Բ. Դրան տնօրինութիւնը խնդրել։ Պէյլիքճի պէյը՝ գեր. փոխանորդ Հօր հետ տեսնուած ժամանակը, միանգամայն ծանուցեր է, թէ տակաւին ո՛չ թլփատութիւն և ո՛չ ամուսնութիւն եղած է նոցա համար։

Ընդհանրապէս կկարծուի, թէ Տ. Աբիստակէս սրբազանի քոյրը այս կրօնափոխութիւնն ընել որոշած եր, այնպէս համարելով թէ՝ իւր եղբօրը մահուանէն յետոյ տարիէ մը հետէ նըպատած տունը՝ որ ազգին սեպհականութիւն է, և զոր բոլորովին իրեն սեպհականել կուզէր, — կարող կըլլայ սեպհականել. սակայն այժմ համոզուած ըլլալու է թէ կրօնքն ո՛րիշ է, սեպհականութեան իրաւունքն ո՛րիշ է։ Ի՛նչ և իցէ, վերջապէս կճանչնայ իւր սխալը։

—

Ատանայէն՝ դեկտ. 16 Թուով։

. . . Խմբագիր

Ձեր պատուական լրագրոյն թիւերն ընթեռնլու պատիւն՝ ունենալուս՝ համողում մը գոյացած ունիմ յիս, որ համաձայն սրտիս զգայմանց անկողմնակալութիւնն ու արդարութիւնը ձեզ սկզբունք ընտրած է. և որոյ ապաւինեալ ներկայս առ ձեզ ուղարկել կը համարձակիմ՝ վստահ լինելով որ զայն ձեր պատուական լրագրոյն էջերէն միոյն մէջ զետեղելու չնորհին կարժանանամ. վստահ եմ նաև որ ձեր արտասուքն իսկ պիտի չարժի կիլիկիոյ թշուառ կացութեան վրայ, և արդեօք ո՛ր հայն է որ չփղձկի ու չարտասուէ այն աւերակաց վրայ՝ որ երբեմն Արմենեան տոհմին փառաց և պերճութեանց որոշանն եղած էր, իսկ այսօր անտէր և անպաշտպան՝ ապագանին իսկ կորուսեալ թշուառ ժողովուրդ մի կը սնուցանէ միայն իւր վշտաց հովտին մէջ։ Ո՞ւր է կիլիկիոյ կարծեցեալ լուսաւորիչը. արդեօք ազգային վարչութեան գլխկրտիչ մեզ կաթողիկոս ընտրելը ինչո՞ւ համար էր. միթե իւր ագարակին մէջ պաշտօնապէս ղեղձ կեանք մը վարելու համա՞ր էր նորա ընտրութիւնը. հապա ո՞վ պիտի հովուէր կիլիկիոյ թշուառ ժողովուրդը և հոգար նորա ցաւերը. ո՞ւր մնացին այն քաղցր յոյսերն որ տածեց նա մեր սրտին մէջ. ո՞ւր մնաց այն հիմնուելիք վարժարանը՝ որուն միջոցաւ կիլիկիոյ կեանք տալ կխոստանար, նախ քան զկաթողիկոսութիւն իւր. այժմ մերթ ադարակն առանձնացած. մերթ չահու գործոց զբաղեալ՝ կաթողիկոսութեան այն փափուկ և ծանր բեռն ալ չուզեր թողուլ իւր վրայէն. քանզի կիլիկիացւոյն կարծիքն այն է՝ որ նոյն պաշտօնն ալ կնպաստէ իւր գործոց։ Կիլիկիոյ թշուառ ժողովուրդը կը հետաքրքրէր լրագրաց էջերն որպէս զի տեսնէ անդ իւր իղձը պսակեալ, այսինքն տեսնել կը ցանկար կիլիկիոյ թշուառ կացութեան խնդիրը վիճաբանութեան ներքև. և արդեօք ո՞ր ատեն պիտի տեսներ վարչութեան խղճին անթինալը՝ եթէ իւր ձայնը բարձրացնելով հանրագրութիւններ չտեղար ընդդէմ վարմանց Մկրտիչ կաթողիկոսի։ Կիլիկիոյ ժողովրդեան համբերութեան սահմանը անցած է, և յուսով է որ վանուց քայքայման ու վիճա-

կայնոց կրած թշուառութեանց մատենին վերջին էջը մօտեցած է։

Մկրտիչ կաթողիկոս իւր վերարկուին տակ սովրած է ամեն ապականութիւն գործելու. փափուկ խոհեմութիւնը կարգելու զմեզ իւր անցելոյն ծածկոցը եղած քողը վերցնել. ազգային վարչութեան համար գաղտնիք մը չէ նորա ընթացքը, պատրիարքարանի արձանագրութիւնները եթէ քաղուած մ'ընեն՝ կարելի էսկ է որ տեղեկանան. և ինչ հարկ, միթէ իւր վերջին առաջարկութիւնը բաւ չէ՞ ազգային վարչութեան համար՝ բնաւ չերկբայիլ իւր գործադրութեանց մէջ, քանի որ նա կապատամբի և Արմաշու անմեղ զոհը իւր իրաւանց քննութիւն կը պահանջէ, և մանաւանդ քանի որ ամբողջ Կիլիկիա ալ ընդերակոս կաթողիկոս կը խնդրէ. Կիլիկիացին բնաւ ապօրինաւորութեան չդիմէր, այլ կխնդրէ դիւրնալ թէ Կիրակոս կաթողիկոս ինչ տուժել տուաւ Ազգին, և ինչ դեմ գործեց, որ ատենին մէջ քննութիւն եղաւ նորա գործոց և ընթացից համար, և որ ժողովը վճռեց նորա յանցանքը։ Ազգային պատկառելի վարչութիւնը հերիք դերեզմանաքար թաւալէ սոյն խնդրոյն վրայ, և թաղէ մոռացութեան մէջ. հերի՛ք կըսեմք մեր աղիողորմ պաղատանաց և մեր բողոքներուն դեմ իւր ականջները խփէ. եթէ այլ ևս սոյն խնդրոյն լուծմանը դանդաղի՝ այնպէս կարծել կուտայ մեզ որ օտար որսողաց իրենց նպատակին մէջ յառաջանալուն դիտմամբ պատճառ տուած պիտի լինի. զի Կիլիկիոյ ժողովուրդը գուցէ տկարամտի դարանակալաց առջև. և այնատեն Մկրտիչ եպիսկոպոսէննիւթական հաչիւ խնդրել վարչութեան թողլով. բարոյապէս եղած կորուստներուն համար ալ ազդովին պէտք է ողբամք. քանզի նոյն կորստեան տեղ ընուշն՝ չըսեմ անկարելի այլ խիստ սուղ է։

Պ. Պ.

Թագրիր ընորհակալութեան մատուցեալ Ազգ. վարչութեան Խառն ժողովին առ մեծ եպարքոսն վասն հաստատութեան Օսմանեան Սահմանադրութեան

ՀՈՒԶՈՒՐԸ ՄԱԱԼԻ ՄԷՎՖՈՒՐԸ ՀԱԶՐԷԹԻ ՍԱՏԱՐԷԹՐԷՆԱՀԻՑԷ

Մաարուզը չաքիրան քէմինէլէրի տըր քի,

Ձիւլիւս Մէհամին մէնուս Հազրէթը փափուհիի մուլին օլան խաթթը Հիւմայունէ՝ պիլ ճիւմլէ թէպաայի Տէվլէթի Օսմանիյէնին միւթէսավիյէն րէֆիտը հալվէ սաատէթէ վէ հուրրիյէթի չախսիյէհ նայիլիյէթլէրի, վէ միւք ու վէթանըն թարադդըհաթ վէ մամուրիյէթի էսպապընըն իսթիհսալ վէ իսթիքմալի ղըյնընտա մէսալիհի ումումիյէնին գայիէհյի մէշվէրէթ վէ ուսուլի մէշրութիյէթ ըապթ իլէ՝ պիր մէճլիսի ումումինին թէշքիլ պույրուլմասը վատ ու թէպղիր պույրուլմուշ ըաը։

Իմթէ մէպահի ֆէյզ ու սէլամէթ օլաճագ չու ուսուլը ճէհիհէի մէշրութիյէ իլէ, դանօն էսասինին, վէ պունը՝ նըզամաթը թանզիմ վէ իթմամ իլէ մէվդըյի իճրայէ գօնըլմասը՝ պու քէրրէ չէրէֆ վհաշ սուտուր պույրուլան խաթթը Հիւմայուն ատալէթ մադրուն Հազրէթը փատիշահի իլէ իրատէ վէ ֆէրման պույրըլմուշ օլմասընտան. վէ միւսթաղնիի թարիֆ օլտուղը իւզրէ իտարէի մէշրութէ ուսուլինին՝ Էւրոպա ատվլէթլէրինտէ թէ'սիս օլունմասը՝ թէ'սիրաթ վէ իճպարաթ սէմէրէսի պուլունմուշ իքէն, տէվլէթի Ալիյէի Օսմանիյէ պու էսասըն իթթիհատղընտա՝ միւճերրէտ հըսսը թապիյիսինէ իթթիպա իյլէմիշ օլտուղը՝ նիզամաթը ճէհտէհէյի մէղքիւրէնին թէմամիի իճրասընտա թէրէտտիւտ վէ թէրաֆի օլունմայաճաղը հագդընտա պիր թէմինաթը դավիյէ պուլունմուշ, վէ գանոնը էսասինին՝ թէպաայի տէվլէթի Օսմանիյէտէն պուլունան միլլի մուխթէլիֆէյի եէկտիկէրի իլէ հուպ վէ րէվապիթի վէթանտաշի իլէ գավիէն ադամ ու բապթ իտէճէկի չիւպհէտէն միւսթէղնի կէօրիւնմուշ օլտուղընտան էրմէնի միլլէթի գուլլարը միւսթաղրադը պահրը հուպուր վէ մէսար, վէ սայէյի Հսանվայէի հազրէթի փատիշահիտէ միլք ու վէթան եէնի պաշտան քէսպի հաեաթը թաղէ իթմէսի իլէ պէրապէր միլլէթի չաքիրանէմիզ ահվալինին ըսլահ օլաճաղընա իւմիտվար օլմուշ, վէ պու պապտէ միւսթէղիլի գալպմիզ օլան սիւրուր վէ հուպուրը՝ հատտը լայըգընտա իֆատէ իտէր քէլիմաթ պուլմադ միւսթէհիլ օլտուղընտան, բուղ ու չէպ մէֆրուղ էօհտէյի չաքիրանէմիզ օլան էտիյէի խայրիյէի հազրէթի փատիշահիի պու մինասիպէթլէ տախի եատու թէքրար իլէ թէյինի լիսանը ուպուտիյէթ դըլընմըշ տըր։

Պէշ իւղ սէնէլիք սատադաթը ճանսիքէրանէ իլէ թախթը ալի պախթը Օսմանիյէ սարըլմըշ, վէ պունը՝ հըրղը ճան իլէ սէվմիշ, քէնտու մէնֆաաթը միլլիյէսինի՝ Տէվլէթը մաթպուսաը մէնաֆի իլէ մէրպութ պուլընտըղընը դատիմտէն պէրու պիլմիշ օլան էրմէնի միլլէթի՝ չիմտիյէ գատար Տէվլէթը մաթպուսընա սատադաթը սամիմէ վէ խըլսէմաթը միւթենէվիատէ պուլունմուշ օլտուղը միսիլու, հէր սուննուֆ թէպաայի Օսմանիյէնին հուզուրը դանօնտա վէ մէմլէքէթին հուդուդ վէ ֆէղայիֆինտէ միւթէսավի պուլունմասը դանօնը էսասիտէ միւնտէրէճ վէ մուսաբրահ պուլունմասընտան պիր գաթ տահա թէշվիդ վէ թէրդիպ օլունարագ պունտան պէօյլէ տախի միլք ու վէթանըն մամուրիյէթ ու թարադդըհաթ վէ մուհաֆազասը ուղուրընտա էգ ճան ու տիլ իֆայէ ֆէրայիզի սատադաթ վէ լազըմէյի խըստէմաթտէ հազըր վէ ամատէ պուլունաճաղըմըզը քէմալի իֆթիխարլա վէ մուպահէթլէ արզու պէյան իտէր, վէ պիլ ճիւմլէ թէպաայի Օսմանիյէնին հուրրիյէթի չախսիյէ վէ րէֆահ վէ սատատէթը հալէ մադհար օլմագ հիմմէթի ճէվիլէօինտէն միւթէնայիմ վէ միսթէֆիտ օլմալարը, վէ իմթիաղաթ վէ մուաֆիաթը միլլիյէնին մուհաֆազա վէ իսթիհբարը հագդընտա պիտիրիղ վէ մէպղուլ պույրիլան միւսաատաթ վէ ինանաթը ճէվլիլէյի ճէնապը փատի չահիտէն ատալի էրմէնի միլլէթի գուլլէրինին շիւքրանիյէթ վէ մահմէտէթինին՝ Աթէպէի մադրուն Հազրէթի Շէհինշահի յէ արզ ու թագտիմինէ միւսաատէյի սէնիյէլի ճէնապը Սատարէթփէնահիլէրի էրզան վէ չաեան իլէ, պու իւզտէն տախի միլլէթճէ ճիւմլէմիզի մէսրուր վէ խանտան պույրըլմասընը իսթիրհամ իյլէրիղ, օլ պապտէ։

Ֆի 24 զիլհիճճէ սէնէ 1293 վէ
Ֆի 28 քեանունի էվվէլ սէնէ 1292

. . . Խմբագիր

Ցառաջիկայ Ս. Ծննդեան առթիւ միմեանց այցելութիւն տալու պատրաստականութենէն աղատ մնալու համար ինչպէս անցեալ տարի, նոյնպէս և այս տարի կիւմչեան մեծ. Ցովհաննէս էֆէնտիի շնորհիւ մեծապատիւ աղգայիններէ եղած հանգանակութիւնը հոգաբարձութիւնս հրատարակելով, իւր խորին շնորհակալիքը կյայտնէ Մեծ. մասնակցողց, մանաւանդ Ցովհաննէս էֆէնտիի որոյ միջոցաւ խղճալի պատսպարելոց նըպաստ մը գոյացած է։

Ցովհաննէս էֆ. կիւմչեան	20նոց	թղթ	3
Դրիդոր էֆ. Գարակէօզեան	»	»	3
Մ. Մանուկ էֆ. Մանուկեան	»	»	3
Սարգիս էֆ. Մանուկեան	»	»	3
Տօքթօր էֆ. Ճէլալեան	»	»	3
Ցարութիւն էֆ. Մանուկեան	»	»	2
Պետրոս էֆ. Գարակէզեան	»	»	2
Մ. Ղազար էֆ. Մանուկեան	»	»	1 1/2
Կրպտ. էֆ. Սթամպօլլեան	»	»	1
Բարսեղ էֆ. Սթամպօլլեան	»	»	1
Ցովհ. էֆ. Քէրէստէճեան	»	»	1
Տօքթ. Գ. էֆ. Ենգեաեան	»	»	1
Նօքթ. Ն. էֆ. Այվազեան	»	»	1
Դրիդոր էֆ. Նազքաշեան	»	»	1
Հմբրձմ. էֆ. Մազպուլեան	»	»	1
Մ. Ցով. էֆ. Սթամպօլլեան	»	»	1
Գրիգորիս էֆ. Մէրտինեան	»	»	1
Կարապատ էֆ. Էվրէնեան	»	»	1/2
Դրիդոր էֆ. Էվրէնեան	»	»	1/2
Աբրահամ էֆ. Կիւմիւշեան	»	»	1
Աբէլ էֆ. Կիւլպէնկեան	»	»	1

(Շարունակելի)

1877 Յունվ. 4 Մնամք յարգանօք
Գրասեն. Հիւան. Ի դիմաց Հոգ. Հիւնդ.
Սենեփեան Մանուկեան

Երկուշաբթի դիշեր Մշոյ առաջնորդարանէն հեռագիր մը եկաւ Պատրիարքարան, որով կծանուցուի թէ քիւրտերը այս օրերս նոր աւարառութիւններ ու սպանութիւններ ըրած են, և թէ՝ ժողովուրդը անապահով վիճակի մէջ կգտնուի։

Պատրիարքարանն այս հեռագիրը անմիջապէս հաղորդեր է Բ. Դրան, գերփոխանորդ Հօր միջոցաւ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր Բ. Դուռը արտաքոյ կարգի ընդհանուր ժողով մը պիտի դումարուէր՝ դեսպանաժողովոյ առաջարկութեանց վերջնական պատասխան տալու համար. բայց վաղուեան մնացեր է։ Այս անգամ նախարարներէն զատ, կրօնական՝ գինուրական ու քաղաքական երեւելի պաշտօնատարք, և այլ նշանաւոր անձինք, ինչպէս նաև պատրիարքները ներկայ պիտի գտնուին, ընդամենը 200 չափ անձինք։

—Իթթիհատ՝ իբրև ստոյգ տեղեկութիւն կծանուցանէ, թէ արդէն շրջաբե-

Ֆրանսիայի Սենատի ընտրությունները

Ֆրանսիայի Սենատի ընտրությունները տեղի ունեցան հունվարի 30-ին։ Ընտրվեցին Սենատի 75 անդամներ։ Ընտրությունների արդյունքները հետևյալն են։

Ընտրվեցին 38 պատգամավորներ։ Նրանցից 16-ը Ընդհանուր ժողովի անդամներ են, 22-ը՝ Գերագույն խորհրդի անդամներ։ Ընտրվեցին նաև 14 պատգամավորներ Ալժիրից, Մարոկկոյից, Տունիսից, Ինդոչինայից և Սենեգալից։

Ընտրվեցին 75 սենատորներ։ Նրանցից 38-ը ներկայացնում են Ընդհանուր ժողովը, 37-ը՝ Գերագույն խորհուրդը։ Ընտրվեցին նաև 14 պատգամավորներ Ալժիրից, Մարոկկոյից, Տունիսից, Ինդոչինայից և Սենեգալից։

Ընտրությունների արդյունքները ցույց են տալիս, որ

տը դինին տալու տեղ, խարդախեալ, անզօր, անպիտան ու չատ վար տեսակ դեղ մը կուտայ անոր, եւ ինքը տաննապատիկ չահ մը կընէ, եւ քսակը կուռեցունէ . . . Թշուառին արտասուքովը :

Դառնանք մեր պատմութեան :

Յայտնի է որ Եւրոպայի մէջ խարդախեալ դեղեր ծախելը քիչ մը դժուար բան է . կանոնաւոր խուզարկութիւններ կըլլան դեղօրէից վաճառատուները . եւ եթէ մէկը բռնուի, սարսափելի մեծ տուգանքներու կենթարկուի :

Սակայն անոնք այդ տեղերուն խարդախեալները իրենց վաճառատուները չեն ծախեր, այլ չինելով անմիջապէս Տաճկաստան կղրկեն եղեր :

Բայց Պօլիս բժշկական տեսչութիւն՞մը կայ, որուն պաշտօնն է այս տեսակ խնդիրները քննել : Վերոյիշեալ Հանդէսին նայելով՝ սոյն տեսչութիւնը հասարակաց առողջութիւնը վտանգող ուրիչ այլեւայլ դեղերու մասին ի գործ դրուած խարդախութիւնները բառնալու նպատակաւ քանիցս Բ. Դրան դիմեր, անոր ուշադրութիւնը հրաւիրեր է, խնդրելով որ քաղաքային դեղավաճառութեան վերաբերեալ օրինաց այս մասին քանի մը տրամադրութիւնները ժամ յառաջ ի գործ դրուելով արդիւնաւոր հսկողութիւն մը եւ ուշիմ գծնդրօլ՞մը ըլլայ :

Յաւալի է որ զանազան պատճառներով ցօղ շատ երկար կըլլայ ձեռ ի բացատրել, կըսէ յիշեալ հանդէսը, եւ կառավարութեան թոյլ ու վարանող վարմունքին պատճառաւ դեղագործներուն յանդգնութիւնը զարմանալի թըռիչ մը առեր է, այնպէս որ ալ սկսեր են խարդախեալ նիւթերու առատութեամբ ամբողջ Տաճկաստան ողողել :

Ա յս միջոցին Պօլսոյ բժիշկներէն չատերը իրար անցեր են, մինչեւ անգամ տեսեր են, որ Սիւլֆաթ տը Գինինի պէս հանրածանօթ ու աղդու դեղ մը անգամ ներգործելէ դադրիլ կ'սկսի, քննութիւն ընելով կտեսնեն, որ Սիւլֆաթ տը Գինինը՝ Սիւլֆաթ տը Գինինի չայոդեր է : Իրաւ է որ անունին իրարու քիչ մը մօտ է, սակայն աղդեցութիւններն իրարմէ չատ տարբեր է : Տեսեր են վերջապէս, որ Սիւլֆաթ տը Գինինը մի միայն քանի մը պատուաւոր դեղագործներու մէջ մնացեր է, որոնք այսպիսի անբարոյական տուրեւառ մը ընելու չափ չեն ուզած նուաստանալ :

(Մնայեալն չայբերով)

Ադդ . Հիւանդանոցի ներքին բժիշկ Տօքթ . Գաբրիէլ Էֆէնտի Նահապետեան, այսուհետեւ ամէն չորեքշաբթի օրերը ժամը 6 էն 8 Սամաթիա Իմրահօրը Թօգաթլեան Պ . Գաբրիէլին դեղարանը, եւ ուրբաթ օրերը ժամը 6 էն 8 դարձեալ Սամաթիա Մ . Ճիվանճիրին դեղարանը, նաեւ Հիւանդանոց իրեն դիմող աղքատ հիւանդաց ըստ առաջնոյն ձրի նայելու պատրաստ ըլլալը կը ծանուցանէ արդյ հասարակութեան :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԻՏԻԵԱՆ

ՄԱՐԻՈՆ ՏԷԼՕՐՄԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ

ԿԱՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՓԱՆՔ

Հեղինակ Լօրէն տը Մէրէ-ը

Երեւելի հեղինակին բոլոր Եւրոպայի մէջ մեծ ընդունելութիւն գտած սոյն դործոյն հայերէն թարգմանութեան Ա. հատորը Պօլիս հասած ըլլալով՝ կը ծախուի Էնի-ձամի չիլինկիրլէր ճատեսի թիւ 8 . ե . ղ . և եաղմաճեան դրատունը : Գին 2 ֆրանք :

Ամբողջ դործը 2 հատորէ պիտի բաղկանայ :

ՕՐԱՑՈՑՑ ՊԱՐՉ

1877

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՓՐԻՍՏՈՍԻ

ՅՕՐԻՆԵԱՆ

Ցերեմիա Քահանայէ Խոսգեղէ

Որ նորաձոյլ մաքուր և ընտիր դրեւրով տպեալ, կգտնուի բոլոր դրավաճառաց քով ի գին 60 փարա :

Ս· ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

ԳԻՇԵՐՕԹԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ ՅԱՐՄԱՁ

Անցեալ օգոստ. ամսոյ 18րդ օրն վարժարանիս արձակուրդի օրերն աւարտեալ ըլլալով՝ աշակերտներն դարձած են և արդէն դասուց աւանդումն իսկ սկսուած է :

Այն ծնողաց կամ օրերու խնամակալ մարդասէր բարերարաց որ իրենց զաւակները կամ որքը վարժարանիս խնամոց յանձնել կուզեն կը յայտարարեմք թէ՝

Ս. Ղեւոնդեանց դիլերօթեայ վարժարանս յառաջադէմ վարժարաններու մեթոտով կանոնաւորեալ խիստ բարեկարդ վարժարան մ'է :

Կ. Պոլսէն և այլ քաղաքներէ փոքր ինչ հեռաւորութիւնը թէև ոմանց համար անհաճոյ թուի, սակայն կերպ մը բարիքէ ծնողաց աչքէն և զբօսալից վայրերէ հեռի անփոփ և անդրադաղ մտօք միայն ուսման պարապելու կողմանէ :

Ուսմանց տեսակներուն ամենը, նկարչութեան ամեն ճիւղերը և լեզուներէն երեք մայն, հայերէն, գաղղիերէն և տաճկերէն կաւանդուին, բայց ոչ բնաւ վեր ի վերոյ կամ թերի :

Ամեն ուսանելի առարկայից համար ընտիր և յաջողակ դասատուներ կան :

Աշակերտաց կեանքն և առողջութիւնը խնամով պահպանելու համար վարժարանս իր մէջ յատկապէս մշտնջենաւոր բժիշկ կպահէ վկայեալ և յաջողակ, և բաւականաչափ դեղարան :

Աշակերտին տարեկան թոշակն է 32 լիրա օսմանեան որոյ մէջ են, երթեւեկութեանց թըղթատարութեանց և սովորական ագանելեաց ծախքէն զատ, ուրիչ բոլոր ծախքերը :

Արձակուրդի կամ պարապոյ օրերը բոլոր տարին միայն մէկ ամիս է և ո՛չ բնաւ աւելի :

Մ'իշտ բաց է և բաց պիտի մնայ վարժարանս . որ ատեն որ ուզեն՝ ազատ են ծնողք կամ բարերարք իրենց զաւակները կամ սաները տալու :

Որոնք որ աշակերտ պիտի ղրկեն մեզ՝ պէտք է կամ Պօլիս Փունջ լրագրոյ արտօնատէր մեծ. Համբարձում Էֆ. Ալաճաճեանի հետ տեսնուին (Ալաճա–համամ խանը խալիլ թիւ 19) և կամ հոս մեզի հետ թղթակցին :

1876 սեպտ. 1

Ի վանս Ս. Ս. Աստուածածնի յԱրմաշ

Խորեն Եպիսկ. Վ. Արմաղան

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ

ՄԵԾ ՏՈՒՆ ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

ԵՒ ԴԵՂՕՐԷԻՑ

Վ· ԾԱՆՆԻ

Բերա Մեծ փողոց Աղաճամի թիւ 77

ԵՒ

Կ. Պոլիս Կամուրջի հրապարակը թիւ 1—2

Եւրոպիոյ առաջին գործարանաց հետ յարաբերութեամբ կապուած, և իւր դեղորէից ընտրութեամբն և գնոց չափաւորութեամբ հռչակուած :

Միակ մթերանոց անուանի Հ. Նէսթլէ քիմիագէտին չինած ՃՆ լափեքին, որոքփրիկ ալբ տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդութենէ ապաքինելոց միակ սննդարար ուտելիքէն համային Եւրոպիոյ մէջ ընդունուած և ամեն դըլխաւոր բժշկաց հաւանութիւնն ստացած :

Հոն կը գտնուի նաև .

Քո՞ֆա (մատակի խմորեալ կաթ) որ մեծ համբաւ ունի Եւրոպիոյ մէջ և չատ կը փնտըռուի :

Սէլֆէր պը Քինին, դուտ և մաքուր, Բէլթիէ, Տիւսօսք, ծօպսթ և Էվանս Լէդէ ճարտար քիմիագէտներէն պատրաստուած :

Զէյտ Խ՞ղ, դուտ, Քրիսթիանայի Բէթթր Մէլտերի դործարանէն ելած :

Եղէրդէ (հինտիպա) խահո՞ւ, Լուտվիկսպուրկի Հ. Ֆրանք գործարանէն ելած ստամոքսի ուժ տուող և ախորժակ բացող, որ հասարակ խահուէի հետ խառնելով՝ գինը մեծապէս կիջեցնէ՝ առանց համի ու հոտը փոխելու :

Աբօհոպական սոսոյց ամեն ժամու մէջ :

Տի՞ժինէ Ջո՞ր, մաղերու անվրիպելի ներկ :

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՈՒԿ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, նաև ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար . կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի . արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ : Իւր դեղական մեծ ազդեցութեամբը սրտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կազեր, գլխի ցաւեր կը վանէ . մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ չատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական դերքը կզգենու :

ONGUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւնք և վերք բուժելու մասին ունեցած պալատական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիչ դեղ մը . հին կամ նոր թունաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրփէնչէ), սրունից և ստեանց վերքեր կամ բոլորովին կանցնին և կամ կլաւանան . օգտակար է նաև հարբուխի, հազի, սրտի բարտխման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան : Իւր կաղդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սըրաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմագրաւէ :

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մանաւանդրապէս Պահճէ–գափու Թաշ խանի կողմերը Պ. Գասապեանի դեղարանը՝ նո. 7՝ կը ծախուի :

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն տոքթոր Հոլլօուէյ ի Լոնտոն Օքըսֆորտ փողոց թիւ 533 :

ՊԱՏՄԱՆՔ ՓՈՒՆՋԻ

1.—Փունջը ԶՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի :

2.—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՛ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ դաւառաց համար :

3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի :

4.—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :

5.—Հատը 40 փարայ է, և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով :

6.—Փանուցման տողը 3 դրուշ է մէկ անգամի համար : Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար :

7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն–Տէր Հ. Ս. Ալաճաճեան, կ. Պոլիս Ալաճա–համամ խալիլ խան միջին յարկ թիւ 19 :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ

Հ· Ս· ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐ· Ս· Ղ· ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ

Բիզա փաշա խան թիւ 3